ԿԱՐԳ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են Համալսարանում ամրագրված գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ Համալսարանի միջոցներից աշխատակիցներին և ուսանողներին ներբուհական դրամաշնորհի (այսուհետ՝ Դրամաշնորհ) շրջանակում թեմաների ֆինանսավորման ընթացակարգը, մասնակիցներին ներկայացվող պահանջները, հայտերի պատրաստման և ներկայացման, մրցույթի անցկացման, թեմաների իրականացման ընթացակարգերը և ակնկալվող արդյունքները:

1.2 Դրամաշնորհը Համալսարանում ամրագրված գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներքին ֆինանսավորման ձևերից է և միտված է, ըստ այդ առաջնահերթությունների, Համալսարանում գիտահետազոտական գործունեության առավել նպատակաուղղված զարգացմանը, ուսումնական գործընթացում հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը:

1.3 Սույն Կարգի իրավական հիմքերն են Համալսարանի կանոնադրությունը, Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագիրը, ՀՀ օրենքը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», ՀՀ օրենքը «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին», Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականությունը, Համալսարանում գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման ու զարգացման հայեցակարգը, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

2. ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1 Դրամաշնորհը տրամադրվում է 3-5 անձից կազմված խմբերի (այսուհետ՝ Խումբ) կողմից ներկայացված և մրցութային կարգով ընտրված մինչև 2 գիտական թեմաներին (այսուհետ՝ Թեմա)՝ 24 կամ 36 ամիս ժամկետով, առավելագույնը համապատասխանաբար 13.920.000 և 20.880.000 ՀՀ դրամ ֆինանսավորմամբ: Մասնավորապես,

Թեմայի 24-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 5 անձի համար-13.920.000 ՀՀ դրամը
- 4 անձի համար- 11.136.000 ՀՀ դրամը
- 3 անձի համար-8.352.000 ՀՀ դրամը

Այդ թվում՝ աշխատանքի վարձատրության (մատուցված ծառայության վճարի) 24-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 5 անձի համար-12.528.000 ՀՀ դրամը
- 4 անձի համար- 10.022.400 ՀՀ դրամը
- 3 անձի համար-7.516.800 ՀՀ դրամը

Թեմայի 36-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 5 անձի համար-20.880.000 ՀՀ դրամը
- 4 անձի համար- 16.704.000 ՀՀ դրամը
- 3 անձի համար-12.528.000 ՀՀ դրամը

Այդ թվում՝ աշխատանքի վարձատրության (մատուցված ծառայության վճարի) 36-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 5 անձի համար-18.792.000 ՀՀ դրամը
- 4 անձի համար- 15.033.600 ՀՀ դրամը
- 3 անձի համար-11.275.200 ՀՀ դրամը

Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ ծավալներից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել հայտի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

2.2 Դրամաշնորհի տրամադրման մրցույթի հայտարարությունը տրվում է Համալսարանի Զարգացման ռազմավարական ծրագրի հաստատումից հետո՝ առաջիկա 1-ին և 3-րդ ուսումնական տարիների դեկտեմբեր ամսվա ընթացքում: Մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմա(ներ)ի ֆինանսավորումը մեկնարկում է հայտարարության տրման տարվան հաջորդող ֆինանսական տարվա ընթացքում:

3. ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1 Խմբի ղեկավար կարող է լինել Համալսարանի գիտական աստիճան ունեցող աշխատակիցը, ով միաժամանակ բավարարում է ներքոնշյալ պայմաններից յուրաքանչյուրին.

- տարիքը մրցույթի հայտարարության տրման օրվա դրությամբ (ըստ 2.2 կետի) չի գերազանցում 70-ը,
- Համալսարանում ունի առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ,
- վերջին 5 տարիների ընթացքում ունի Թեմայի ուղղությամբ առնվազն 1 գիտական/գիտամեթոդական հոդված՝ տպագրված SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում կամ Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրերում,
- վերջին 5 տարիների ընթացքում ունի Թեմայի ուղղությամբ առնվազն 6 գիտական/գիտամեթոդական հոդված՝ տպագրված ՌԴ ԲՈՀ-ի, ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում (առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով

գիտամեթոդական/ուսումնագիտական /ուսումնամեթոդական աշխատանքը, մենագրությունը, տպագրված բարձրագույն ուսումնական հաստատության կամ գիտահետազոտական կառույցի Գիտական խորհրդի երաշխավորությամբ, համարժեք է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում տպագրված 2 գիտական/գիտամեթոդական հոդվածի):

3.2 Խմբում որպես կատարող կարող է ընդգրկվել Համալսարանի աշխատակիցը, ով վերջին 5 տարիների ընթացքում ունի Թեմայի ուղղությամբ առնվազն 4 գիտական/գիտամեթոդական հոդված՝ տպագրված РИНЦ համակարգում, ՌԴ ԲՈՀ-ի, ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում (առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով գիտամեթոդական/ ուսումնագիտական/ուսումնամեթոդական աշխատանքը, մենագրությունը, տպագրված բարձրագույն ուսումնական հաստատության կամ գիտահետազոտական կառույցի Գիտական խորհրդի երաշխավորությամբ, համարժեք է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում տպագրված 2 գիտական/գիտամեթոդական հոդվածի):

3.3 Խմբում որպես կատարող պետք է ընդգրկվի Թեմայի ուղղությանը համապատասխանող ամբիոնի կողմից թողարկվող որևէ մասնագիտությամբ բակալավրի, մագիստրատուրայի կամ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառող (մինչև 35 տարեկան) առնվազն 1 ուսանող:

3.4 Խմբում որպես խորհրդատու կարող է ընդգրկվել Թեմայի ոլորտին առնչվող, գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը:

3.5 Միևնույն ժամանակահատվածի համար մրցույթին ներկայացված հայտի Խմբում չի կարող ընդգրկվել որևէ անդամ (ղեկավար և/կամ կատարող և/կամ խորհրդատու), ով ընդգրկված է Համալսարանի կողմից ֆինանսավորվող այլ Թեմայում (սույն կամ այլ ներբուհական դրամաշնորհի շրջանակում տրամադրված), եթե այդ Թեման չի ավարտվում հայտարարված մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմա(ներ)ի ֆինանսավորման ֆինանսական տարում:

3.6 Պահպանելով Խմբի անդամների թույլատրելի քանակը՝ հայտը ներկայացնելիս Խմբում որպես կատարող կամ խորհրդատու տարբեր եռամսյակների համար կարելի է ներգրավել տարբեր անձանց, ովքեր այդ ժամանակահատվածում ներգրավված չեն Համալսարանի կողմից ֆինանսավորվող Թեմա (սույն կամ այլ ներբուհական դրամաշնորհի շրջանակում տրամադրված) իրականացնող այլ Խմբում, եթե այդ Թեման չի ավարտվում հայտարարված մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմա(ներ)ի ֆինանսավորման ֆինանսական տարում:

3.7 Խմբի անդամները չեն կարող ընդգրկվել տվյալ ուսումնական տարում Համալսարանի կողմից գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհների տրամադրման մրցույթներին ներկայացված մեկից ավելի հայտում:

3.8 Թեմայի իրականացման ընթացքում Խմբի ղեկավարի՝ համապատասխան հիմնավորումներով զեկուցագրի հիման վրա հնարավոր է Խմբի ոչ ուսանող կատարողների և խորհրդատուի՝ ըստ գիտական աստիճանի, իսկ ուսանող կատարողի դեպքում՝ ըստ առաջադիմության, համարժեք փոփոխություն (ընդ որում՝ նոր ընդգրկվող կատարողները և/կամ խորհրդատուն այդ ժամանակահատվածում պետք է ներգրավված չլինեն Համալսարանի կողմից ֆինանսավորվող Թեմա (սույն կամ այլ ներբուհական

դրամաշնորհի շրջանակում տրամադրված) իրականացնող այլ Խմբում):

3.9 Թեմայի իրականացման ընթացքում՝ տվյալ ժամանակահատվածի համար, պարտադիր է Խմբի ղեկավարի և կատարողների Համալսարանի աշխատակից և/կամ ուսանող լինելու կարգավիճակի պահպանումը: Կարգավիճակը չպահպանելու պահից լուծվում է նրանց հետ կքված ծառայությունների մատուցման պայմանագիրը (բացառությամբ ուսումնառողի դեպքում մի կրթական աստիճանից մյուսին անցման ժամանակահատվածի):

4. ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1 Հայտն անհրաժեշտ է կազմել հայերեն, Word միջավայրում, A4 ձևաչափի գրքային, ներքևում համարակալված թղթի վրա՝ բոլոր կողմերից 2.5 սմ լուսանցքներով, 1.5 միջտողային հեռավորությամբ, 12 չափի «Unicode Sylfaen» տառատեսակով, ըստ լայնքի հավասարեցմամբ՝ պահպանելով աղյուսակների ամբողջականությունը:

4.2 Հայտը կազմելիս անհրաժեշտ է պահպանել Հավելված 1-ում բերված ձևերի բաժինների հերթականությունը, կառուցվածքը և ծավալը:

4.3 Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման ժամկետը սահմանվում է մրցույթը հայտարարելուց (ըստ 2.2 կետի) հետո 30 օրացուցային օր:

4.4 4.1, 4.2 կետերում ներկայացված պահանջներին համապատասխան պատրաստված հայտը, Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված 2), Խմբի կատարողի՝ ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը 4.3 կետով սահմանված ժամկետում Խմբի ղեկավարի կողմից (ով պաշտոնապես ներկայացնում է Խումբը՝ հանդես գալով վերջինիս անունից) տպագիր 2 օրինակով ներկայացվում են Համալսարանի Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն) և էլեկտրոնային տարբերակով ուղարկվում Կենտրոնի էլեկտրոնային փոստի հասցեին:

4.5 Մրցույթին ներկայացնելով հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող հայտ և այնուհետ Թեմայի իրականացման մասին հաշվետվություն՝ Խմբի ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Եթե հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերը համարում է, որ իր իրավունքները խախտվել են, ապա դրանք պաշտպանելու նպատակով կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5.1 Մրցույթին ներկայացված հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո (ըստ 4.3 կետի) 3 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի անցկացման նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է ներբուհական խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ մինչև 8 անձից:

5.2 Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Համալսարանի ռեկտորը՝ որպես Խորհրդի նախագահ, Կենտրոնի տնօրենը՝ որպես Խորհրդի նախագահի տեղակալ, Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի պետը, Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետը,

ՈՒԳԸ նախագահը և Թեմաների ոլորտներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի մինչև 3 ներկայացուցիչներ՝ որպես անդամներ:

5.3 Մրցույթին ներկայացված հայտի Խմբի անդամը չի կարող ընդգրկված լինել Խորհրդի կազմում: Եթե Խորհրդում ի պաշտոնե ընդգրկված նախագահը, նախագահի տեղակալը կամ անդամները միաժամանակ հանդիսանում են նաև մրցույթին ներկայացված որևէ հայտի Խմբի անդամ, ապա տվյալ անձինք չեն ընդգրկվում Խորհրդում:

5.4 Խորհրդի նիստը իրավազոր է, եթե մասնակցում է Խորհրդի կազմի առնվազն 2/3-ը: Նիստի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք: Նիստն արձանագրվում է:

5.5 Մրցույթին ներկայացված հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո (ըստ 4.3 կետի) 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտերը և կից փաստաթղթերը Կենտրոնի կողմից անցնում են տեխնիկական ստուգման նախնական փուլ:

5.6 Կենտրոնի կողմից հայտերի տեխնիկական ստուգման նախնական փուլն ավարտելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի նախագահի կողմից հրավիրված 1-ին նիստում անցկացվում է հայտերի տեխնիկական ստուգման փուլ, որի ընթացքում որոշվում է հայտը հետ վերադարձնել Խմբի ղեկավարին կամ հանձնել Կենտրոն՝ հետագա գործընթացն ապահովելու նպատակով:

5.7 Հայտը հետ է վերադարձվում, եթե

- առկա են անհամապատասխանություններ Կարգի 2.1, 3.1-3.7, 4.1, 4.2, 4,4 կետերից որևէ մեկի մասով:
- ամբողջությամբ կամ մասամբ (հետազոտության իրականացման եռամսյակային փուլերից առնվազն մեկում նախատեսված հետազոտության կտրվածքով) կրկնում է Համալսարանի կողմից նախկինում ֆինանսավորված որևէ Թեմայի:

5.8 Կենտրոնի տնօրենը Խորհրդի որոշումից հետո (ըստ 5.6 կետի) 2 աշխատանքային օրվա ընթացքում տեխնիկական ստուգման փուլ անցած հայտերը տրամադրում է Թեմաների ուղղությանը համապատասխանող ամբիոններ՝ առաջիկա ամբիոնի նիստում քննարկելու և 1 շաբաթվա ընթացքում նիստի արձանագրությունից քաղվածք (հայտը ֆինանսավորել/չֆինանսավորելու երաշխավորությամբ) ստանալու նպատակով:

5.9 Ամբիոններից քաղվածքները ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտերն ուղարկվում են արտաքին փորձաքննության՝ համաձայն Հավելված 3-ում ներկայացված գնահատման թերթիկի:

5.10 Արտաքին փորձաքննության կազմակերպման գործընթացը Համալսարանի ռեկտորի հանձնարարականի համաձայն, որպես կանոն, համակարգում է Կենտրոնի տնօրենը (եթե նա չի հանդիսանում մրցույթին ներկայացված որևէ հայտի Խմբի անդամ) (այսուհետ՝ Համակարգող): Հայտերը ուղարկվում են արտաքին փորձաքննության 2 բարձրագույն ուսումնական հաստատություններ, գիտահետազոտական կամ այլ կառույցներ, որոնց հետ կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր: Արտաքին փորձաքննության ժամանակ փորձագետի տված առավելագույն միավորը 75-ն է:

5.11 Եթե արտաքին փորձաքննության արդյունքում տվյալ հայտի համար ստացված գնահատականների տարբերությունը 30 միավորից փոքր է, ապա հայտի արտաքին փորձաքննութան վերջնական գնահատականը 2 արտաքին փորձագիտական գնահատականների միջին թվաբանականն է:

5.12 Եթե արտաքին փորձաքննության արդյունքում տվյալ հայտի համար ստացված գնահատականները տարբերվում են միմյանցից առնվազն 30 միավորով, ապա հայտը Համակարգողի կողմից ուղարկվում է արտաքին փորձաքննության 3-րդ բարձրագույն ուսումնական հաստատություն, գիտահետազոտական կամ այլ կառույց: Այդ դեպքում արտաքին փորձաքննության վերջնական գնահատականը 3 արտաքին փորձագիտական գնահատականներից 2 իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին 2 արտաքին փորձագիտական գնահատականների և 3-րդ արտաքին փորձագիտական գնահատականի հավասար տարբերության դեպքում արտաքին փորձաքննության վերջնական գնահատականը 2 առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

5.13 Համակարգողը արտաքին փորձաքննության արդյունքները ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դրանք զեկուցագրով ներկայացնում է Համալսարանի ռեկտորին և Խմբերի ղեկավարներից յուրաքանչյուրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում է իր կողմից ներկայացված հայտի համար արտաքին փորձաքննության արդյունքում ստացված փորձագիտական գնահատականները և մեկնաբանությունները՝ առանց փորձագետի և կազմակերպության տվյալների:

5.14 Արտաքին փորձաքննության արդյունքները Խմբի ղեկավարներին ուղարկելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դրանք կարող են բողոքարկվել Խմբի ղեկավարի կողմից՝ ռեկտորին ներկայացնելով գրավոր դիմում:

5.15 Բողոքարկման դեպքում, Համալսարանի ռեկտորի հանձնարարականի համաձայն, Համակարգողի կողմից հայտերը ուղարկվում են արտաքին փորձաքննության մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, գիտահետազոտական կամ այլ կառույց:

5.16 Բողոքարկման արդյունքում հայտի վերջնական արտաքին փորձագիտական գնահատականը տվյալ հայտի համար մինչև բողոքարկումը ձևավորված արտաքին փորձագիտական գնահատականի և բողոքարկումից հետո ստացված արտաքին փորձաքննության արդյունքում ստացված գնահատականի միջին թվաբանականն է:

5.17 Արտաքին փորձաքննության վերջնական արդյունքները ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի նախագահի հրավիրած նիստում Խորհուրդը սահմանում է հայտերի համար անցումային շեմը (80 միավորից ոչ ցածր), վերջնականորեն քննարկում, փակ գաղտնի քվեարկությամբ գնահատում հայտերը՝ ըստ Խորհրդի անդամների գնահատականների միջին թվաբանականի՝ համաձայն Հավելված 4-ում ներկայացված գնահատման թերթիկի: Խորհրդի տված առավելագույն միավորը 10-ն է:

5.18 Համակարգողը արտաքին փորձաքննության արդյունքների, Խորհրդի գնահատականների և Կենտրոնի կողմից ամրագրվող միավորների (Հավելված 5,6) հիման վրա՝ գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վերջնական վարկանիշային ցանկը և 2 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցագրով ներկայացնում է Համալսարանի ռեկտորին:

5.19 Վերջնական վարկանիշային ցանկից Համալսարանի ռեկտորն իր հրամանով հաստատում է ֆինանսավորվող մինչև 2 Թեմա, որից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Համակարգողի կողմից այդ մասին էլեկտրոնային փոստով իրազեկվում են Խմբերի ղեկավարները:

6. ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

6.1 Թեմաների ֆինանսավորման հրամանից հետո (ըստ 5.19 կետի) 7-օրյա ժամկետում Համալսարանի ռեկտորի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի Խմբի անդամների միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր:

6.2 Մրցույթին ներկայացված հայտերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, հայտերի հակիրճ նկարագրությունները (Ձև 2) և մրցույթի արդյունքները Թեմաների ֆինանսավորման հաստատումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնի ներկայացմամբ տեղադրվում են Համալսարանի պաշտոնական կայքում:

6.3 Թեմայի իրականացման ընթացքում յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ՝ հաջորդող ամսվա առաջին 20 աշխատանքային օրվա ընթացքում, Խմբի ղեկավարի կողմից 2 տպագիր և էլեկտրոնային տարբերակներով Կենտրոն է ներկայացվում ընթացիկ (12-ամսյա) հաշվետվություն՝ ըստ Հավելված 7-ում ներկայացված ձևաչափի:

6.4 Թեմայի ավարտից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում Խմբի ղեկավարի կողմից 2 տպագիր և էլեկտրոնային տարբերակներով Կենտրոն է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն՝ ըստ Հավելված 8-ում ներկայացված ձևաչափի:

6.5 Ներկայացված ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններն ուսումնասիրելու և դրանց համապատասխանությունը հայտում ներկայացված պլանի (ըստ եռամսյակների) հետ ստուգելու նպատակով Խորհրդի նախագահի կողմից հրավիրվում է հերթական նիստը, որի ընթացքում Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ ընթացիկ հաշվետվության դեպքում՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության, ամփոփիչ հաշվետվության դեպքում՝ դրական/բացասական գնահատելու մասին:

6.6 Խորհրդի հերթական նիստից հետո (ըստ 6.5 կետի) 3 աշխատանքային օրվա ընթացքում ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների տիտղոսաթերթերը Կենտրոնի ներկայացմամբ տեղադրվում են Համալսարանի պաշտոնական կայքում:

6.7 Խմբի ղեկավարի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվետվությունը և վերջինիս վերավերյալ Խորհրդի եզրակացությունը (ըստ 6.5 կետի) Կենտրոնի տնօրենի կողմից ներկայացվում է նաև Համալսարանի Գիտական խորհրդի առաջիկա նիստում՝ ի գիտություն:

6.8 Թեմայի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները մինչև Թեմայի ավարտը պետք է.

6.8.1 հրատարակվեն 24-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 8, 36-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 12 գիտական/գիտամեթոդական հոդվածներում, որոնցից 24-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 1-ը, 36-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 2-ը SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում, Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրերում, իսկ մյուսները՝ ՌԴ ԲՈՀ-ի, ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում: Առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով գիտամեթոդական/ուսումնագիտական/ուսումնամեթոդական աշխատանքը, մենագրությունը, տպագրված բարձրագույն ուսումնական հաստատության կամ գիտահետազոտական կառույցի Գիտական խորհրդի երաշխավորությամբ, համարժեք է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում

տպագրված 2 գիտական/գիտամեթոդական հոդվածի: Հետազոտությունների արդյունքները հրատարակելիս անհրաժեշտ է նշել Համալսարանի կողմից ստացված ֆինանսավորման մասին՝ նշելով Թեմայի ծածկագիրը. *Հետազոտությունն իրականացվել է Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SUSh_____ թեմայի շրջանակներում: Исследование выполнено при финансовой поддержке Ширакского государственного университета им. М. Налбандяна в рамках научного проекта № SUSh_____. The research was carried out with the financial support of State University of Shirak after. M. Nalbandyan within the framework of the scientific project № SUSh ____.* Թեմայի իրականացման շրջանակում տպագրված աշխատանքները Կենտրոնի ներկայացմամբ տեղադրվում են Համալսարանի պաշտոնական կայքում:

6.8.2 ներկայացվեն 24-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 2, 36-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 3 միջազգային գիտաժողովներում:

6.8.3 ամփոփվեն առնվազն 30 էջ (A4 ձևաչափի) ծավալով գիտամեթոդական/ ուսումնագիտական/ ուսումնամեթոդական աշխատանքում, որը պետք է ներկայացված լինի

ա) մասնագիտական ամբիոնի կողմից նախատեսված գիտական սեմինարների ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում,

բ) 6-ժամյա ոչ ֆորմալ դասընթացի տեսքով տվյալ և/կամ հարակից մասնագիտություններում սովորող ուսանողների շրջանում:

6.9 Եթե ամփոփիչ հաշվետվությունը ներկայացնելիս Խորհրդի կողմից կամրագրվի, որ Խմբի կողմից ամբողջությամբ չեն կատարվել 6.8 կետով նախատեսված աշխատանքները, ապա ամփոփիչ հաշվետվությունը կգնահատվի բացասական և այդ հանգամանքը կանդրադառնա հետագայում Համալսարանի հայտարարած մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացվելիք հայտի վերջնական գնահատականի վրա՝ դրանից հանելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 3 տոկոսի չափով միավոր՝ Խմբի ղեկավարի և կատարողներից յուրաքանչյուրի ընդգրկվածության դեպքում (Հավելված 6): Հետագա մրցույթներին Խմբի ղեկավարի և/կամ կատարողների կողմից ներկայացված հայտի վերջնական գնահատականի նվազեցումը կչեղարկվի նախատեսված աշխատանքներն իրականացնելուց, դրանք զեկուցագրով մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա դեկտեմբերի 1-ը Կենտրոն ներկայացնելուց և վերջինիս կողմից հաստատվելուց հետո:

6.10 Մինչ Թեմայի ավարտը ցանկալի է առնվազն 1 ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի կատարումը՝ Թեմայի շրջանակում իրականացվող հետազոտության հենքի վրա: Այդ նպատակով Թեմայի ֆինանսավորումից հետո Խմբի ղեկավարի կողմից Կենտրոնի տնօրենին ներկայացված դիմումի հիման վրա Կենտրոնը իրազեկում է համապատասխան մասնագիտական ամբիոնին մրցույթի արդյունքների վերաբերյալ՝ առաջիկա ուսումնական տարում դասաբաշխման շրջանակում Խմբի անդամներից առնվազն մեկին (առկա հնարավորությունների սահմաններում) ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի ղեկավարմամբ ծանրաբեռնելու դիմումով:

6.11 Ամփոփիչ հաշվետվությունը ներկայացնելիս ցանկալի է բարելավման նպատակով ուսումնական գործընթացում հետազոտության արդյունքների ներդրումը տվյալ և/կամ

հարակից մասնագիտությունների համապատասխան դասընթաց(ներ)ի թեմատիկ օրացուցային պլաններում (ԹՕՊ) համապատասխան բաժինների/թեմաների լավարկմամբ (ամբիոնի նիստի համապատասխան որոշմամբ):

6.12 Եթե ամփոփիչ հաշվետվությունը ներկայացնելիս Խորհրդի կողմից կամրագրվի 6.10 կետում նշված ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի և/կամ 6.11 կետում նշված ԹՕՊ-երի բարելավման առկայությունը, ապա այդ հանգամանքը կանդրադառնա Համալսարանի հայտարարած առաջիկա մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացվելիք հայտի վերջնական գնահատականի վրա՝ դրան գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 1 տոկոսի չափով միավոր՝ Խմբի ղեկավարի և կատարողներից յուրաքանչյուրի ընդգրկվածության դեպքում: Հետագա մրցույթներին Խմբի ղեկավարի և/կամ կատարողների կողմից ներկայացված հայտի վերջնական գնահատականի ավելացումը կգործի յուրաքանչյուրի ընդգրկվածությամբ առաջիկա թվով 1 հայտի շրջանակում (Հավելված 6):

6.13 Թեմայի ֆինանսավորումը կարող է դադարեցվել, եթե.

- ընթացիկ (12-ամսյա) հաշվետվությունը չի ներկայացվում 6.3 կետում սահմանված ժամկետներում,
- հաշվետու ժամանակահատվածում չեն իրականացվել եռամսյակային փուլերում նախատեսված աշխատանքները (ըստ 6.8 կետի):

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն Կարգը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ:

7.2 Սույն Կարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Հավելված 1

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ
_____ ԹԹ. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ
ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____»_____20 թ. Ծածկագիր՝ _____

(լրացվում է ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնում)

Ձև 1

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի

   - վերնագիրը (20 բառից ոչ ավել)

   _____

   - մասնագիտությունը _____

   - թվանիշը _____

   - բնույթը

տեսական	
փորձարարական	

2. Բանալի բառեր (10 բառից ոչ ավելի) _____

3. Խմբի ղեկավարի

   - ազգանունը, անունը, հայրանունը _____

   - ծննդյան թիվը _____

   - գիտական աստիճանը, կոչումը_____

   - պաշտոնը (առկայության դեպքում)_____

   - հեռախոսահամարը _____

   - էլեկտրոնային հասցեն _____

4. Ֆակուլտետը_____

5. Ամբիոնը _____

6. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս

7. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թույլատրելի թիվը ____

8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____

9. Հայցվող ընդհանուր գումարը_____

10. Խմբի ղեկավարի ստորագրությունը _____

«____»_____20 թ.

Form 1

COVER PAGE

1. Project Title _____

   - Field of Science _____

   - Type of Research:

Theoretical	☐
Experimental	☐

2. Key Words _____

3. Principle Investigator (Name, Surname) _____

4. Scientfic degree, title _____

5. Department _____

6. Chair _____

Форма 1

ТИТУЛЬНЫЙ ЛИСТ

1. Заголовок проекта _____

   - Область _____

   - Тип проекта:

Теоретический	☐
Экспериментальный	☐

2. Ключевые слова_____

3. Данные руководителя проекта (имя, фамилия) _____

4. Ученая степень, звание_____

5. Факультет_____

6. Кафедра_____

Ձև 2

ՀԱՅՏԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ[1]

[1] Ներկայացվում է հայերեն (100-150 բառ), անգլերեն և ռուսերեն:

ՆԱԽԱԳԻԾ[2]

Խնդրի դրվածքը (մինչև 1 էջ):

Թեմայի արդիականությունը (մինչև 1 էջ):

Թեմայի գիտական նպատակները (մինչև 1 էջ):

Հետազոտության ծրագիրը (մինչև 2 էջ):

Հետազոտության եռամսյակային փուլերը (մինչև 3 էջ).

N	Իրականացվելիք հետազոտության				
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետները՝ ըստ եռամսյակների	Պահանջվող գումարը (Լրացվում է ՀՆ 5-ին համապատասխան)
Առաջին տարի					
1					
2					
3					
4					
Երկրորդ տարի					
1					
2					
3					
4					
Երրորդ տարի					
1					
2					
3					
4					

Առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 1 էջ):

Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ):

Օգտագործված գրականության ցանկը:

[2] Ներկայացնել հայերեն, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:

Ձև 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ՄԱՍԻՆ
(ՂԵԿԱՎԱՐ, ԿԱՏԱՐՈՂ, ԽՈՐՀՐԴԱՏՈՒ)

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Պաշտոնը (առկայության դեպքում)	
Հեռախոսահամարը	
Էլեկտրոնային հասցեն	
Հրատարակված - գիտական հոդվածների թիվը - ուսումնամեթոդական/ուսումնագիտական/գիտամեթոդական աշխատանքների, մենագրությունների թիվը	
Թեմայի ուղղությամբ վերջին 5 տարում SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում կամ Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում կամ ՌԴ ԲՈՀ-ի կամ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական հոդվածները (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), ուսումնամեթոդական/ուսումնագիտական/գիտամեթոդական աշխատանքները, մենագրությունները (նշել հեղինակներին, վերնագիրը, քաղաքը, հրատարակչությունը, տարին, էջերի քանակը).	
1. 2.	
Ընդգրկվածությունը Թեմայի ուղղությամբ վերջին 5 տարում Համալսարանի և/կամ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ կողմից ստացված դրամաշնորհներում.	
1. 2.	

Ձև 5

ՀԱՅՏԻՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնում)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը)									
Ազգանուն, անուն հայրանուն	ՏԱՐԻ			ՏԱՐԻ			ՏԱՐԻ		
	Անվանական գումարը	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը	Անվանական գումարը	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը	Անվանական գումարը	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը
1)									
2)									
3)									
4)									
5)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ, ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼՆ	ՏԱՐԻ	ՏԱՐԻ	ՏԱՐԻ
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ	ՏԱՐԻ	ՏԱՐԻ	ՏԱՐԻ
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ԸՆԴԱՄԵՆԸ /ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ/			

Խմբի ղեկավար՝

_____ _____

ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն

Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետ՝

_____ _____

ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն

Չև 6

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ[3]

[3] Հիմնավորել նախահաշվի 100.000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը (սարքեր, նյութեր, տպագրություն, գործուղումներ և այլն):

Հավելված 2

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի
ռեկտոր _____ին

_____ից
Խմբի ղեկավարի անուն, ազգանուն, հայրանուն

_____
Հասցե

_____
Հեռախոս

Դիմում

Խնդրում եմ ընդունել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների և ուսանողների գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման մրցույթին մասնակցության «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն, հայրանուն

«____»_____20 թ.

Հավելված 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Արտաքին փորձաքննության գնահատական

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0,5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

Գերազանց: Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:	5 միավոր
Շատ լավ: Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:	4 միավոր
Լավ: Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:	3 միավոր
Միջին: Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:	2 միավոր
Վատ: Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:	1 միավոր
Շատ վատ: Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:	0 միավոր

_____

Գնահատվող հայտի վերնագիրը

1	Նպատակներ: Որքանո՞վ են արժեքավոր հետազոտության նպատակները:	
2	Արդիականություն: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3	Նորույթ: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4	Իրագործելիություն: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող ժամանակահատվածում հետազոտության նպատակներին հասնելը:	
5	Նախագիծ: Որքա՞ն հստակ է ձևակերպված հայտը:	
6	Համապատասխանություն: Որքանո՞վ է նախագիծը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
7	Իրականացում: Որքանո՞վ է իրատեսական հայտի իրականացումը:	
8	Առնչությունն այլ բնագավառների հետ: Որքանո՞վ է հայտի իրականացումը նպաստում տվյալ կամ հարակից բնագավառների առաջընթացին:	
9	Կարևորություն: Որքանո՞վ է հայտը նորարարական իր արդյունքների հնարավոր կիրառություններով(գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, համակարգերի և մեթոդների, ուսումնական գործընթացի բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10	Միջազգային համագործակցություն: Որքանո՞վ է հայտի իրականացումը նախատեսում միջազգային համագործակցություն	
11	Իրականացման մեթոդներ և փուլեր: Որքանո՞վ են հայտում ներկայացված մեթոդները և փուլերը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
12	Իրականացման փուլերի վերահսկելիություն: Որքանո՞վ է իրատեսական նախագծի իրականացման փուլերի վերահսկելիությունը:	

13	Տեխնիկական ապահովվածություն: Որքանո՞վ են բավարար առկա և (կամ) ձեռբերվելիք տեխնիկական միջոցները հայտի իրականացման համար:	
14	Արդյունքների տնօրինում: Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
15	Նախահաշիվ: Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումը ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն	
Փորձագետի ընդհանուր գնահատական		*Մինչև 75 միավոր*

Փորձագետի մեկնաբանություններ (ծավալը չի սահմանափակվում)

Հետազոտության նպատակների մեկնաբանություն (հարցաշարի 1-4 կետերը):
Նախագծի մեկնաբանություն (հարցաշարի 5-10 կետերը):
Նախագծի իրականացման մեկնաբանություն (հարցաշարի 11-17 կետերը):

_____

Օր, ամիս, տարի

_____ _____

Գրախոսի գիտական աստիճան և կոչում, ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն

Հավելված 4

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Խորհրդի գնահատական

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0,5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

Գերազանց: Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:	5 միավոր
Շատ լավ: Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:	4 միավոր
Լավ: Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:	3 միավոր
Միջին: Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:	2 միավոր
Վատ: Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:	1 միավոր
Շատ վատ: Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:	0 միավոր

_____

Գնահատվող հայտի վերնագիրը

1	Հետազոտության ղեկավարում: Որքանո՞վ է համապատասխանում Խմբի ղեկավարի մասնագիտական որակավարումը և փորձառությունը հայտի իրականացմանը:	
2	Իրականացնողների կազմ: Որքանո՞վ է համապատասխանում Խմբի կատարողների/խորհրդատուի մասնագիտական որակավորումը և փորձառությունը հայտի իրականացմանը:	
Խորհրդի ընդհանուր գնահատական		*Մինչև 10 միավոր*

Հավելված 5

Կենտրոնի կողմից ամրագրվող միավորներ

<table>
<tr><td>1</td><td>Ամբիոնի կողմից հայտը ֆինանսավորման երաշխավորելու/չերաշխավորելու որոշման առկայություն</td><td>0/5 միավոր</td></tr>
<tr><td>2</td><td>Թեմայի ուղղությամբ վերջին 5 տարում Խմբի ղեկավարի և ոչ ուսանող կատարող(ներ)ի կողմից SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում կամ Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում կամ ՌԴ ԲՈՀ-ի կամ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական հոդվածների առկայություն (առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով գիտամեթոդական/ուսումնագիտական/ուսումնամեթոդական աշխատանքը, մենագրությունը, տպագրված բարձրագույն ուսումնական հաստատության կամ գիտահետազոտական կառույցի Գիտական խորհրդի երաշխավորությամբ, համարժեք է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում տպագրված 2 գիտական/գիտամեթոդական հոդվածի): Եթե տվյալ աշխատանքը տպագրված է Խմբի անդամների համահեղինակությամբ, ապա այն հաշվվում է 1 անգամ: Գնահատումը կատարվում է՝ ըստ հետևյալ սանդղակի.
<table>
<tr><th>Հոդվածների քանակ</th><th>Հատկացվող միավոր</th></tr>
<tr><td>0</td><td>0</td></tr>
<tr><td>1</td><td>1</td></tr>
<tr><td>2</td><td>2</td></tr>
<tr><td>3</td><td>3</td></tr>
<tr><td>4</td><td>4</td></tr>
<tr><td>5-6</td><td>5</td></tr>
<tr><td>7-9</td><td>6</td></tr>
<tr><td>10-13</td><td>7</td></tr>
<tr><td>14-18</td><td>8</td></tr>
<tr><td>19-24</td><td>9</td></tr>
<tr><td>25 և ավել</td><td>10</td></tr>
</table></td><td>0-10 միավոր</td></tr>
<tr><td>3</td><td>Թեմայի ուղղությամբ վերջին 5 տարում Խմբի ղեկավարի և ոչ ուսանող կատարող(ներ)ի՝ Համալսարանի և/կամ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ կողմից ստացված դրամաշնորհներում ընդգրկվածություն: Գնահատումը կատարվում է՝ ըստ հետևյալ սանդղակի.
<table>
<tr><th>Հոդվածների քանակ</th><th>Հատկացվող միավոր</th></tr>
<tr><td>0</td><td>0</td></tr>
<tr><td>1</td><td>1</td></tr>
<tr><td>2</td><td>2</td></tr>
<tr><td>3</td><td>3</td></tr>
<tr><td>4</td><td>4</td></tr>
<tr><td>5</td><td>5</td></tr>
</table></td><td>0-5 միավոր</td></tr>
<tr><td colspan="2">Ձևավորվող ընդհանուր գնահատական</td><td>Մինչև 15 միավոր</td></tr>
</table>

Հավելված 6

Կենտրոնի կողմից ամրագրվող գումարվող (բոնուսային)/հանվող միավորներ

N	Գումարվող (բոնուսային)/հանվող միավոր ապահովող Խմբի անդամ(ներ)ի ազգանուն, անուն, հայրանուն	Թեմայի ծածկագիրը, որում ընդգրկված է եղել Խմբի՝ գումարվող (բոնուսային)/հանվող միավոր ապահովող համապատասխան անդամը	Գումարվող (բոնուսային)/հանվող միավոր
1			
2			

Հավելված 7

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ
_____ ԹԹ. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

Թեմայի անվանումը հայերեն

Թեմայի անվանումը անգլերեն

Թեմայի անվանումը ռուսերեն

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը _____ տարի
Հաշվետու ժամանակահատվածը_____20__թ.-ից - _____20__թ._ ներառյալ

Թեմայի ղեկավարի ազգանուն, անուն, հայրանուն հայերեն, անգլերեն, ռուսերեն

Հաշվետու ժամանակահատվածի համար հատկացված ֆինանսական միջոցները _____ ՀՀ դրամ

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակված գիտական հոդվածների ընդհանուր քանակը՝ ____, որից SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում, Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրերում՝ _____:

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային գիտաժողովներին ներկայացված զեկույցների ընդհանուր քանակը __, որից՝ արտերկրում ____:

Թեմայի ղեկավարի ստորագրությունը _____

Ամսաթիվ _____

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

N	Նախատեսված հետազոտությունը՝ ըստ եռամսյակային փուլերի	Իրականացված հետազոտությունը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ[4]

[4] Ներկայացվում են հաշվետու ժամանակահատվածում ամսագրերում տպագրված հոդվածները, գիտամեթոդական/ուսումնագիտական/ուսումնամեթոդական աշխատանքները, մենագրությունները և գիտաժողովներին մասնակցության վերաբերյալ տվյալները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ[5]

N	Անվանումը	Ֆինանսավորման ծավալը (ՀՀ դրամ)
1	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը	
2	Այլ ծախսեր, այդ թվում՝	
	Սարքեր և նյութեր	
	Գործուղումներ	
	Տպագրություն	
Ընդամենը՝		

Թեմայի ղեկավար՝ _____ _____

ստորագրություն ազգանուն, անուն, հայրանուն

Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետ՝

_____ _____

ստորագրություն ազգանուն, անուն, հայրանուն

«____» _____ 20 թ.

[5] Կից ներկայացնել Այլ ծախսեր կետով նախատեսված փաստացի ծախսերը հաստատող բոլոր փաստաթղթերը:

Հավելված 8

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ _____ ԹԹ. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

Թեմայի անվանումը հայերեն

Թեմայի անվանումը անգլերեն

Թեմայի անվանումը ռուսերեն

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը _____ տարի
Հաշվետու ժամանակահատվածը_____20 թ.-ից - _____20 թ. ներառյալ

Թեմայի ղեկավարի ազգանուն, անուն, հայրանուն հայերեն, անգլերեն, ռուսերեն

Թեմայի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները _____ ՀՀ դրամ

Թեմայի շրջանակում հրատարակված գիտական հոդվածների ընդհանուր քանակը՝ ____ , որից SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում, Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրերում՝ _____:

Թեմայի շրջանակում միջազգային գիտաժողովներին ներկայացված զեկույցների ընդհանուր քանակը __, այդ թվում՝ արտերկրում ____:

Թեմայի ղեկավարի ստորագրությունը _____

Ամսաթիվ _____

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Թեմայի իրականացման ժամանակահատվածում աշխատանքներն ընթացել են Թեմայի կատարման եռամյակային փուլերին համապատասխան։

N	Նախատեսված հետազոտությունը՝ ըստ եռամյակային փուլերի	Իրականացված հետազոտությունը

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում, Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրերում հոդվածներ (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը).

1.

2.

ՌԴ ԲՈՀ-ի, ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում հոդվածներ (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը).

1.

2.

Ուսումնամեթոդական/գիտամեթոդական/ուսումնագիտական աշխատանքներ, մենագրություններ (նշել հեղինակներին, վերնագիրը, քաղաքը, հրատարակչությունը, տարին, էջերի քանակը).

1 .

2 .

Գիտաժողովներ (նշել զեկուցողներին, վերնագիրը, գիտաժողովի անվանումը, տարին, վայրը).

1.

2.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ[6]

N	Անվանում	Ֆինանսավորման ծավալը /ՀՀ դրամ/		
		1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
1.	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը			
2.	Այլ ծախսեր, այդ թվում՝			
	ա) սարքեր և սարքավորումներ,			
	բ) նյութեր և գրենական պիտույքներ,			
	գ) գործուղումներ,			
	դ) տպագրություն			
	Ընդամենը			
	Ընդհանուրը			

Թեմայի ղեկավար՝ _____ _____

ստորագրություն ազգանուն, անուն, հայրանուն

Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետ՝

_____ _____

ստորագրություն ազգանուն, անուն, հայրանուն

[6] Կից ներկայացնել Այլ ծախսեր կետով նախատեսված փաստացի ծախսերը հաստատող բոլոր փաստաթղթերը: